

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. փետրվարի 1-ի նիստի /արձանագրություն N 9/

1. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին, ամբիոնների վարիչներին, ուսումնական ստորաբաժանումների ղեկավարներին ուսումնասիրել բուհերի վարկանիշային սանդղակը և 15 օրյա ժամկետում ներկայացնել ինստիտուտի վարկանիշի բարելավմանն ուղղված առաջարկներ ռեկտորատի նիստում քննարկելու համար:
2. Ինստիտուտի կայքի բովանդակային մասի բարելավման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով
 1. Ավագյան Հովհաննես
 2. Ավանեսյան Վարուժան
 3. Առաքելյան Ռուզաննա
 4. Պետրոսյան Աստղիկ
3. 2016թ. նախատեսել առնվազն երեք գիտաժողովի կազմակերպում, այդ թվում միջազգային ձևաչափի գիտաժողով,
 - 3.1 միջազգային ձևաչափի գիտաժողով կազմակերպելու նպատակով համագործակցել «Արտֆեստ» միջազգային թատերական փառատոնի հիմնադիր-նախագահ Արթուր Ղուկասյանի հետ,
 - 3.2 հանձնարարել ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ն. Սարգսյանին ԳԽ առաջիկա նիստի հաստատմանը ներկայացնել 2016թ. գիտաժողովի թեմաները,
 - 3.3 Հանձնարարել պրոռեկտորներ Վ. Եղիազարյանին և Հ. Ավագյանին նախապատրաստել և տպագրել ինստիտուտի բուկլետը:
4. 2015-2016 ուս. տարվա II կիսամյակի նախապատրաստման ընթացքը համարել բավարար,
 - 4.1 հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին II կիսամյակի առաջին երեք օրերին կազմակերպել շրջայց, հետևել ուսանողների և դասախոսների հաճախելիությանը:

5. Հավանություն տալ Համագգային հայ կրթական և մշակութային միության հետ համագործակցելու և «Հայրենի հող» խորագրով կարճամետրաժ ֆիլմերի համատեղ մրցույթ կազմակերպելու առաջարկին,
- 5.1 սույն որոշումը ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:
6. Հանձնարարել գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին սահմանված կարգով կատարել ինստիտուտի ֆինանսավորմամբ տպագրված Ն. Անանյանի «Էջեր հայ քնարերգության» գրքի մուտքագրումը և 10 օրինակ անվճար հատկացնել հեղինակի դստերը՝ Ջ. Ֆարմանյանին:
7. Հանձնարարել պրոռեկտոր Վ. Եղիազարյանին կազմակերպել և վերահսկել ս.թ. փետրվարի 9-ից ինստիտուտի բուֆետում տաք սնունդ մատակարարելու նախապատրաստական աշխատանքները:
8. Հանձնարարել հեռակա ֆակուլտետի դեկան Ա. Եղիազարյանին վերահսկել և արագացնել հեռակա ֆակուլտետի ուսանողների ուսման վարձավճարների հավաքագրման գործընթացը:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան